# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**28 մարտի 2025 թվականի N 175 - Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 323-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի մարտի 25-ի թիվ 43/14/75711 գրությունը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության Սյունիքի մարզային ծառայությունների կառուցվածքը հաստատելու, քաղաքացիական պաշտպանության ծառայություննների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 51 -Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 323-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 3-րդ և 4-րդ սյունյակների «Արտակ Բաղդասարյան» և «ՀՀ ՆԳՆ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի ծառայության խմբի ավագ տեսուչ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել համապատասխանաբար «Համլետ Վասիլյան» և «ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կապանի բաժնի պետ» բառերով:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

28 մարտի 2025թ.

ք. Կապան